№ 198 ԿԻՐԱԿԻ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 198

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ և աշակերտութիւնը յայտնում են, որ սեպտ. 7-ին, դպրոցի վերակացու

ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐԻ

մահվան տարելիցի օրը, Խօջիվանքի եկեղեցում տեղի կունենայ պատարագ, որից յետոյ հոգեհանգիստ և մահարձանի բացումը։

Պատարագի սկիզբը ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։

(ա. օ.) 835. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, 1914 Թ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԸ

կազմում է

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ներկայացման զուտ արդիւնքը կը յատկացվի յօգուտ պատերազմից վնասվածների։ Ֆ. Ր. ՌԱԴՕԼԻՆԻ ռէժիսէօրութեամբ և մասնակցութեամբ յայտնի դերասանուհի Ն. Ա. ԲՈՒԴԿԵՎԻՉԻ կը ներկայացվի 1) «ՄԱՀՎԱՆ ՇԷՄՔԻՆ» Ն. Միսսուրովի և 2) «ՕՐ. ՖԻՖԻ» Մօպասսանի։ Համերգային բաժանմունք մասնակցութեամբ յայտնի դաշնակահար Ա. Կ. ԲՕՐՕՎՍԿԻԻ, Մ. Ա. Կոլոտովայի, Ի. Պ. Սարաջևի և Փոխարքայի Թիկնապահ-կօզակների երգեցիկ խմբի։ Ապօֆէօզ նկարիչ Շմերլինգի բեմադրութեամբ։ Ազգային հիմներ, որ կը կատարէ 5-րդ հրացանաձիգ բրիգադայի երաժշտախումբը։

Սկիզբը երեկոյեան 8¼ ժամին։ Տոմսակները ոչ ոքի չեն ուղարկվի, այլ կը վաճառվեն Թատրոնի կասսայում։ առ. 844. 2—2

Թիֆլիսի Վաճառականների Աւագ ԱՐ. Ն. ՄԻԼԵԱՆ

խնդրում է Թիֆլիսի պ. պ. վաճառականներին, արդիւնաբերողներին և առևտրականներին շնորհ բերել կիրակի, սեպտեմբերի 7-ին 1914 թ. առաւօտեան ժամը 11-ին Վաճառականական Ընկերութեան

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ տեղի կունենայ Աւագի Դիւանատանը (Բէբուտովսկայա փող., № 50) քննելու հետևեալ հարցը՝

Վիրաւոր զինւորներին եւ պահեստիներին Թիֆլիսի Վաճառականութեան կողմից օգնելու գործը կազմակերպելու մասին։

Ժողովը կայանալուց առաջ տեղի կունենայ մաղթանք՝ ռուս զէնքերին յաղթութիւն շնորհելու համար, և հոգեհանգիստ՝ պատերազմի դաշտում ընկած զինւորների յիշատակին։

առ. 843. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

սեփական շինութեան մէջ

վիրաւոր զինւորների համար բանալով

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՅԻՍՈՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՈՎ

խոնարհաբար խնդրում է բոլոր սրտացաւ անձանց արձագանք տալ այդ բարի գործին և օգնել խորհրդին նուիրաբերութիւններով դրամով, սպիտակեղէնով, կահ-կարասիքով և մթերքներով։

Խորհուրդը սրա հետ միասին խնդրում է այն անձանց, որոնք կը ցանկանան ծառայել հիւանդանոցում գթութեան քրոջ, հիւանդապահի և այլ պաշտօններով, բարեհաճել գալ Ընկ. գրասենեակը գրվելու համար (Абасъ-Абадская пл. № 7, с. д.).

(ա. օ.) առ. 851. 6—1

(Կ. Ուսումնար. Շրջանի Հոգաբարձուի Թոյլտւութեամբ)

ՖՐԷՕԲԵԼԵՎԵԱՆ Միամեայ Դասընթացքներ

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

(Վելիկօկնեաժեսկայա փող. № 109, տէլէֆօն 1—22)։

Դասընթացքների նպատակն է տեսականօրէն և գործնականօրէն պատրաստել իգական սեռին պատկանող այն անձերին, որոնք կամենում են իրանց նուիրել երեխաների դաստիարակութեանը տանը և ընտանիքում։ Դասընթացքի լրիւ վճարն է 30 ռուբլի։ Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 15-ից։ Ցանկացողներին խնդրվում է գրվել նախքան պարապմունքներն սկսվելը։ Մանրամասնութիւնների մասին տեղեկանալ դասընթացքների կառավարչուհուց։ առ. (հ.) 837. 2—1

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻ հայոց եկեղեցական-ծխական Հոգաբարձութիւնը հրաւիրում է

ՄԷԿ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒ կամ ՔԱՀԱՆԱՅ

առնուազը միջնակարգ կրթութեամբ, որ ունենալու է կրօնի դասեր տեղական միջնակարգ դպրոցներում։

Թեկնածուները ենթարկվելու են քուէարկութեան ծխական ժողովում և ընտրվածները ներկայացվելու են Թեմակալին հաստատութեան։

Պայմանների մասին և վկայականների վաւերացրած պատճէններով դիմել՝ Екатеринодаръ, Кубанской обл. Армянскому Церковно-Приходскому Попечительству.

Հոգաբարձութիւն

(օ. մ.) առ. 854. 3—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամէն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշէր
Ս. Պ. Տահպարոնեանց
(ե. կ.) առ 868. 100—85

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաքաշեան

(մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

վերադառնալով Կովկասի հանքային ջրերից՝ կը վերսկսէ հիւանդների ընդունելութիւնը սեպտեմբերի 10-ից։ Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչևսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(ե. հ. կ.) առ. 784. 25—8

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։

Ընդունելութիւնը ամէնայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.

Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (ա. օ.) 804. 0—11

ՄԻ ԸՆԴԴԻՄԱՆԱՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋԻՆ

«Մշակի» և «Баку» թերթի մէջ արծարծված այն միտքը, թէ ներկայ պատմական խոշոր րօպէում, համազգային լայն հոգեբանութեան պահանջներին գոհացում տալու համար պէտք է գործել ազգովին, միահաղոյն, իսկ դրա համար պէտք է ստեղծել մի համազգային բիւրօ, ընտրված պատգամաւորական ժողովի ձեռքով, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այդ միտքը, կրկնում ենք, գրաւել է լայն ուշադրութիւն և համակրական արձագանք գտել զանազան խաւերում։ Նոյն խնդրի մասին նորից խօսում է «Баку» թերթի մէջ Եր. Պալեան, իսկ դա ցոյց է տալիս, որ այդ միտքը արծարծվում է և Բագուի խաւերում։

Մեր և «Баку» թերթի արծարծած միտքը շատ պարզ է և դիւրըմբռնելի։ Այժմ, երբ մեր ընդհանուր հայրենիք Ռուսաստանը պատերազմ է մղում յանուն մի արդար դատի Գերմանիայի և Աւստրիայի դէմ, երբ ամենայն հաւանականութիւն կայ, որ Ռուսաստանը պատերազմի բռնվի և Թիւրքիայի հետ, երբ Ռուսաստանի մղած և մղելի պատերազմը խորին համակրութիւն և ոգևորութիւն է առաջ բերել համայն հայ ժողովրդի մէջ և հայ ժողովրդի զանազան խաւերը, դասակարգերը, կուլտուրական և ազգային այլ հաստատութիւնները իրանց այդ ոգևորութեան մէջ աշխատում են ամեն կերպ իրանց համակրութիւնը և մասնակցութիւնը նիւթապէս և բարոյապէս արտայայտելու, հարկ անհրաժեշտ է, որ այդ համակրութիւնը և վերաբերմունքը արտայայտվի համազգայնօրէն, իբրև համայն հայ ժողովրդի արտայայտութիւն։

Ճիշդ է, գործում են զանազան հաստատութիւններ, կան զանազան բիւրօներ Թիֆլիսում, Պետրօգրադում, Բագւում, որոնք զբաղվում են ազգային գործերով, բայց դրանք ամենքը շրջանային, մասնաւոր հաստատութիւններ կամ բիւրօներ են, որոնք իրանց ընտրութեան պայմաններով, կազմով չեն կարող լինել բոլորովին արտայայտիչ համայն հայ ժողովրդի իղձերի և ցանկութիւնների։

Այդ պատճառով, երբ պահանջ է դրվում, որ գործենք համազգայնօրէն, արտայայտենք մեր ոգևորութիւնը և իղձերը, մեր աջակցութիւնը միահամուռ կերպով, մի մարմնի ձեռքով, որ ունենայ իրաւունք համարել իրան ներկայացուցիչ հայ ժողովրդի, այդպիսի պահանջը, իբրև բոլորովին արդարացի և բնական, պէտք է ցնծութեամբ և համակրութեամբ ընդունվի։

Դժբաղդաբար՝ կան մարդիկ, որոնց կուսակցական նեղ միտումների և շահերի համար ձեռնտու չէ այդ պահանջը։ Եւ ահա դրանք վայնասուն են բարձրացնում և թոյլ տալիս իրանց վիրաւորական խօսքեր արտասանել այն անձանց հասցէին, որոնք դրել են այդ պահանջը։

Մենք գտնում ենք, որ միայն հասարակական տականքները կարող են այդպիսի վայնասուն բարձրացնել, միայն միութեան և համերաշխութեան թշնամիները կարող են մերժել այդ պահանջը. ուստի և արհամարհանքով պէտք է վերաբերվել այդպիսի վայնասուններին և շարունակել առաջ տանել համերաշխութեան և միութեան փորձը։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սեպտ. 4-ին արևելա-պրուսական զօրաճակատում գեներալ Րէննէնկամպֆը վերջնականապէս կանգնեցրեց գերմանացիների արշաւանքը. մի քանի տեղերում նրանք տեղերը փոփոխում են։

Աւստրիական զօրաճակատում հետապնդելը շարունակվում է։ Մեր զօրքերը մօտեցել են Սենեավի, Եարօսլավի և Պերէմիշլի ամրութիւններին։

Աւստրիական հեծելազօրը խստագոյն պարտութիւն կրեց պատերազմի սկզբում, գալիցիական կռւի երկրորդ կէսում նա բոլորովին չքացաւ կռւի դաշտից և վերջին օրերը ոչ մի տեղ չը փորձեց օգնութեան հասնել մեզանից շրջապատված աւստրիական առաջապահ զօրամասերին։

Գերմանացիների առաջընթաց մասերը անդրվիսլեան շրջանում ամրանում են Չէնստոխով-Նէլլեն-Սլէսին զօրաճակատում։

Հաղորդում են, որ Արևելեան-Պրուսիայում խոշոր կորուստներ ունեցաւ սակսոնական հեծելազօրը, որ նոր էր եկել Ֆրանսիայից։

Սանդոմիրի մօտ նորից ջարդվեցին Բոյրլի գերմանական զօրաբանակի մնացորդները։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5—6 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ գերմանացիների դիմադրութիւնը Էնի գետից դէպի հիւսիս ընկած բարձունքների վրա շարունակվում է, թէև մի քանի կէտերում արդէն սկսում է թուլանալ։ Ընդհանուր դրութիւնը անփոփոխ է։ Ճակատամարտը շարունակվում է ամբողջ զօրաճակատում Մասսի և Ուազի միջև։ Գերմանացիք գրաւած ունեն լաւ պաշտպանված դիրքեր, որոնք գտնվում են արտիլէրիայի պաշտպանութեան տակ։ Մենք չափազանց դանդաղ ենք շարժվում, բայց մեր զօրքերը, ոգևորված բարոյապէս յարձակողական շարժումով, արիութեամբ ու յաղթական կերպով վանեցին թշնամու հակա-յարձակումները թէ ցերեկով և թէ գիշերով։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ սեպտ. 4-ին, երեկ. ժ. 11-ին, դրութիւնը ռազմադաշտում անփոփոխ էր։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ (Արևելեան Աֆրիկա).—Նակօր պահակավայրի վրա, որ գտնվում է գերմանական գաղութի սահմանին, անակնկալ յարձակում գործեց 250 զինւորից բաղկացած գերմանական մի զօրամաս Մակսիմի երեք թնդանօթով։ Պահակավայրը պաշտպանող հինգ ոստիկանները դիմադրութիւն ցոյց տուին և կրակեցին 700 գնդակ։ Զօրամասի հրամանատարը սպանվեց՝ մէկը վիրաւորվեց, մէկը փախաւ և յայտնեց դէպքի մասին Ճակամասում։ Զօրամասի գլխաւոր մասը վերադարձաւ իր հողը, թողնելով Նակօրում աննշան զօրախումբ։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Ճակատամարտը տեւեց՝ սեպտ. 4-ին Ուազ-Վէզր ամբողջ զօրաճակատում առանց էական փոփոխութեան։ Գերմանացիք երեք անգամ փորձեցին յարձակման դիմել անգլիական զօրքի դէմ, բայց անաջողութեան հանդիպեցին։ Մենք մի քանի կէտում առաջացանք։ Էն գետից դէպի հիւսիս գտնվող բարձունքների վրա մենք վանեցինք գիշերային կտրուկ հակայարձակումները, նաև Րէյմսի դէմ շարժվելու փորձը։ Գերմանացիք Րէյմսից սկսած մինչև Արգօն կատարել են ընդարձակ բերդաշինական աշխատանքներ, գրաւելով բացառապէս պաշտպանողական դրութիւն։ Լօթարինգիայում և Վօգէզներում նրանք նոյնպէս գրաւում են պաշտպանողական դիրքեր սահմանին մօտ։ Արգօնում և Վէվրում դրութիւնը անփոփոխ է։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 սեպտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.—Չեռնոգորցիք, միանալով Դրինայի մօտ սերբերի հետ, յաղթական կերպով Բոսնիա մտան։

Առաւօտեան աւստրիական մի ռազմանաւ նորից ռմբակոծեց Անտիվարին, չը պատճառելով վնաս։

ՑԷՏԻՆԻԷ.— Գօրազդան չեռնոգորցիների ձեռքն անցնելու ժամանակ աւստրիացիք կորցրին մօտ 300 սպանվածի և մեծ քանակութեամբ վիրաւորների։ Չեռնոգորցիք գերել են 2 օֆիցէրի և 80 զինւորի։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 սեպտեմբերի

ՄԱՐՍԷԼ.—Բերվեց գերմանական «Ժիւլիա» նաւը, որը բռնվել են Միջերկրական ծովում ռումինական դրօշակով։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Սինօդը, ուշադրութեան առնելով, որ վիրաւորները, պատերազմի դաշտից հեռանալուց յետոյ, ստիպված են լինում յաճախ շատ երկար ժամանակ մնալ ճանապարհին առանց որևէ քրիստոնէական սփոփանքի, անհրաժեշտ գտաւ առաջարկել ուղղափառ հոգևորականութեանը՝ հոգեպէս մխիթարել և նիւթական օգնութիւն հասցնել վիրաւորներին պատերազմի բեմից նրանց մեկնելու ժամանակ։

Ժող. լուս. մինիստրը հրահանգով բացատրեց, որ ներկայումս բարձր կրթարաններում գտնվող աւստրիահպատակ և գերմանահպատակ ուսանողները պէտք է հեռացվեն զբաղմունքներից, մինչև որ նրանք կընդունեն ռուսահպատակութիւն։

Թագաւոր Կայսրին բաղդ ունեցաւ ներկայանալ Ցարսկոէ Սէլօյում ռուսաբնակ չեխ հասարակութիւնների պատգամաւորութիւնը։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.— Գերմանական դեսպանը հերքում է լրագրական այն տեղեկութիւնները, թէ գերմանացի գեներալ ֆօն-դէր-Գօլցը դիմել է բէլգիական ազգաբնակութեանը՝ Բրիւսէլից գերմանացիների առաջիկայում մեկնելու առիթով։

ՆԻՇ.—Թագաւոր Կայսրից սերբ զօրքերի ընդհանուր հրամանատար գահաժառանգ Ալէքսանդրին Գէօրգիևսկի խաչ շնորհելը ամբողջ Սերբիայում թողեց ամենացնծագին տպաւորութիւն և ընդունվեց իբրև թանգագին գերաշնորհ ամբողջ սերբ ժողովրդին։

ԼՕՆԴՕՆ.—Լորդերի պալատ։ Բնորոշելով պատերազմական դրութիւնը, Կիտչէնէրը ամենաջերմ դարձուածքներով խօսեց ֆէլդմարշալ Ֆրէնչի և այլ գեներալների ու օֆիցէրների մասին, որոնք բրիտանական զօրքերի գլուխ անցած՝ արի պաշտպանութիւն են ցոյց տալիս ֆրանսիական, ռուսական և բէլգիական զօրքերին։ «Բրիտանացիք,—ասաց Կիտչէնէրը,—հպարտանում են, որ կարող են աջակցել Ֆրանսիային՝ երկիրը թշնամուց մաքրելու գործում»։ Կիտչէնէրը ասաց, որ ներկայումս պատերազմական գործողութիւններին մասնակցում են աւելի քան վեց բրիտանական հետևակ և երկու հեծեալ զօրաբանակ, նաև գաղթականական զօրքերից հեծեալ և հետևակ մասեր։ Կիտչէնէրը այնուհետև ասաց, որ կազմակերպվում են նոր չորս տէրիտօրիալ զօրք, որոնք մի քանի ամիս յետոյ պատրաստ կը լինեն մասնակցելու պատերազմին։ Մի զօրաբանակ արդէն մեկնել է Եգիպտոս, մի գումարտակ Մալտա, նոր գնդեր կը ստացվեն ծովային հետևակ զօրամասերից, որոնց կազմում է լորդ Չէրչիլը։ Կիտչէնէրը հաւատացած է, որ գարնան մօտ Մեծ Բրիտանիան ցոյց կը տայ իր հզօր ոյժը դիմադրելու համար։ Շօշափելով ռուսաց զօրքի գործողութիւնները, Կիտչէնէրն ասաց. «Օգտվում եմ առիթից իմ խորին շնորհաւորանքները ուղղել Ռուսաստանին նրա պատերազմական աջողութիւնների առիթով, որոնք նոր փայլ կը տան նրա զօրքին»։

ՊԱՐԻԶ.—Զինւորական մինիստրը յիշեցնում է ազգաբնակութեանը, որ վիրաւոր գերմանացիներին օգնելու պարտականութիւնը մի խնդիր է, որ պատուիրում են ոչ միայն միջազգային օրէնքները և Ժընէվի կոնվէնցիան, այլ և մարդասիրական զգացմունքները։ Ֆրանսիացիք պէտք է յուսան՝ որ նոյն կերպ կը վարվեն նաև գերմանացիք։ Մինիստրը յորդորում է ֆրանսիական բժշկա-սանիտարական մարմիններին, օգնել գերման գերիներին լիակատար անձնուիրութեամբ։

ՀՌՕՄ.—Հերքվում է այն տեղեկութիւնը, թէ իբր Իտալիան զօրք է իջեցրել կամ իջեցնում է Վալօն։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Հայրենիք ուղարկվող նամակների մէջ աւստրիացի և գերմանացի գերիները համարեա միաբերան ընդգծում են, որ նրանք հանդիպեցին այնպիսի լաւ վերաբերմունքի, որի մասին չէին էլ կարող երազել։

ԲՈՐԴՕ.—Մինիստրների խորհուրդը Ժոֆֆրի առաջարկութեամբ գեներալ Կաստելնոյին նուիրեց Պատուաւոր Լէգէոնի մեծ օֆիցէրական նշան։

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների պալատ։ Մամուլի և հասարակութեան համար յատկացված սրահը լի է։ Գահական ճառը կարդաց նախագահի անձնափոխանորդը։ Տեղի ունեցաւ հայրենասիրական խանդավառութեան տեսարան։ Պալատի անդամները պրտասուախառն աչքերով երգում էին ազգային օրհներգը, յետոյ լսվեց բուռն բացագանչութիւն։ Երբ պալատի անդամները ցրվում էին, վերնասրահներում թնդաց «կեցցէ Թագաւորը», «կեցցե՛ն Անգլիան և Իրլանդիան»։ Անգլիական պարլամենտի երկարամեայ պատմութիւնը չէ յիշում իր գոյութեան ամբողջ ընթացքում այդպիսի ցոյց։ Րէդմոնդը դարձաւ բազմաթիւ օվացիաների առարկայ պալատի կուլուարներում։

Գահական ճառի մէջ, որ յետաձգում է պարլամենտի նստաշրջանը, բացատրված են այն հանգամանքները, որոնք դրդեցին Անգլիային պատերազմ յայտարարել, շնորհակալութիւն է յայտնված համայնքների պալատին խոշոր պետական ծախքերը ծածկելու համար առատաձեռնութիւն ցոյց տալուն համար և ասված է. «Մենք կռւում ենք արժանաւոր նպատակի համար և վայր չենք դնի մեր զէնքը, մինչև այդ նպատակը լիովին չիրագործվի»։

Ընդունվեց այն բիլլը, որ յետաձգում է մի տարով կամ մինչև պատերազմի վերջանալը, եթէ նա երկարվի, հոմրուլի բիլլ և Ուէլսում եկեղեցին պետութիւնից բաժանելու օրինագծի գործադրութիւնը։

Հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւնից երևում է, որ պատերազմական ծախքերը մի ամսվայ ընթացքում հաւասարվեցին 45 միլիօն ֆունտի։ Այդ հսկայ գումարը պետական գանձարանը ստացել է մի ամսվայ ընթացքում առանց երկրի արտադրիչ ուժերի վրա ազդելու։

Պարլամենտի նստաշրջանը գահական ճառով յետաձգված է մինչև հոկտ. 14-ը։

«Թայմսին» հեռագրում են Նիւ-Եօրկից. «Իւվինգպօստ» թերթը հաղորդում է, բարձր դիւանագիտական աղբիւրի տեղեկութիւնների համաձայն, որ Գերմանիան պատրաստ է քննել հաշտութեան առաջարկութիւնը պայմանով, որպէսզի Գերմանիայի եւրոպական տիրապետութիւնները չը տարրալուծվեն և որպէսզի գերմանական պետութիւնը անձեռնմխելի մնայ. գաղութների հարցը կարելի է առանձին քննութեան խնդիր դարձնել։

«Թայմսը» հրատարակել է Բուրցեվի նամակը, որ յայտնում է, թէ Ռուսաստանի ազգաբնակութեան բոլոր կուսակցութիւնները և բոլոր դասակարգերը միացել են պատերազմի առիթով յանուն մարդկութեան և ազատութեան գործի։ Կառավարութիւնը աջակցութիւն կը գտնէ կռիւը մինչև իր վախճանին հասցնելու համար։

ՀՌՈՄ.—Ռումին պատգամաւոր Դիամանդին «Կօրիէրէ-դ'Իտալիայի» թղթակցին յայտնեց, որ Ռումինիան մտադիր է գործել Իտալիայի հետ համաձայնվելով, գիտակցելով այժմ աւելի քան երբևիցէ՝ թէ ո՛ր աստիճան սերտ կերպով զուգադիպվում են իտալական և ռումինական շահերը։ Իտալիան պէտք է դառնայ բալկանեան մեծ ազգ, և Ռումինիան Իտալիայի կարգադրութեան տակ ամեն միջոց կը դնէ այդ նպատակին հասնելու համար։ Դիամանդին յարակցեց, որ Ռուսաստանը ոչինչ այնպէս չէ կամենում, ինչպէս բանալ իր նաւահանգիստները իտալական արդիւնաբերութեան ու առևտրի համար. Դիամանդիի ասելով, Ռումինիայի վերաբերմունքը դէպի Բուլղարիան, Սերբիան և Յունաստանը շատ լաւ է։ Թալէաթ բէյի յանձնարարութիւնը լիակատար պարտութիւն կրեց։ Թալէաթ-բէյը առաջարկեց, որպէսզի Ռումինիան անպայման հանդէս գայ Թիւրքիայի հետ միասին յօգուտ Գերմանիայի և Աւստրիայի, սակայն Ռումինիան վճռապէս մերժեց այդ առաջարկութիւնը, որ հետամուտ էր վերստին Բալկանները մասնել հրի ու արեան։

ՍՕՖԻԱ.—Ազգային բուլգար միութեան պատգամաւորութիւնը այցելեց Նօէլ Բէկստոնին և շնորհակալութիւն յայտնեց նրան բուլգարների անունից, որոնք շնորհապարտ են նրա և բուլգար կոմիտէի անշահախնդիր ջանքերի համար՝ ուղղված բուլգար գործի պաշտպանութեանը Անգլիայում։ Պատգամաւորութիւնը ցանկութիւն յայտնեց, որպէսզի, պատերազմը վերջանալուց յետոյ, Մեծ Բրիտանիան, որ միշտ պաշտպանել է մանր ժողովուրդների անկախութիւնն ու ազատութիւնը, վերջ դնելով բուլգարների չարչարանքներին, սահմանէ, վերջապէս, Բալկաններում ընդհանուր խաղաղութիւն և համաձայնութիւն։

ԵԱՍՍԻ.—Կայացաւ հսկայական հայրենասիրական ցոյց։ Ճառերի մէջ համակրութիւն էին յայտնում երրեակ համաձայնութեան։ Ցուցարարները ունէին դրօշակներ «Մեծն Ռումինիա» և «Կամենում ենք գնալ Կարպատների վրայով» մակագրութիւններով։

ԱԹԷՆՔ.—Մամուլը շարունակում է ցնծագին յօդուածներ նուիրել դաշնակից զօրքերի մեծ յաղթութիւններին։

ՄԻՆՍԿ.—Բերին գերմանական և աւստրիական 2 աէրօպլան։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Նախագահ Վիլսոնը Միացեալ Պետութիւնների Բեռլինի դեսպան Ջէրարդից հեռագիր ստացաւ, որ յայտնում է, թէ դեսպանի այն հարցին, թէ արդեօք Վիլհէլմ կայսրը պատրա՞ստ է քննելու հաշտութեան պայմանները, կանցլէր Բէտման-Հօլվէգը պատասխանել է, որ քանի որ դաշնակիցները համաձայնութիւն են կապել չը դադարեցնել պատերազմական գործողութիւնները այլ կերպ, բայց միայն ընդհանուր համաձայնութեամբ, ուստի Միացեալ Պետութիւնները պէտք է հաշտութեան առաջարկութիւնները ստանան նրանց կողմից։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 սեպտեմբերի

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ.—Նիկօլսկ-Ուսուրեան շրջանի հեղեղի ժամանակ զոհվեցին 220 մարդ հանքերի բացառապէս կորէացիներ և չինացիներ։

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է, որ հին ռազմանաւ «Ֆիցջարդ Սէկօնդը» ջրասուզվել է ջրանցքում փոթորկի ժամանակ։ 64 նաւաստիներից 43-ը ազատվել են Պօրտլանդում։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կօպէնհագէնից հեռագրում են, որ գեներալներ Մօնօվրին, Դիւբայլը և Ֆօշը շարունակում են հալածել գերմանացիներին։ Վիւրտէմբէրգի պրինցի և գեներալ Հաուզէնի զօրքերին սպառնում է սոսկալի ջարդ ետևից։ Կլուկի և Բիւլովի զօրքերը փախչում են դէպի բէլգիական սահմանը, ուր նրանց դէմ են դուրս գալիս բէլգիացիք։ Կրօնպրինցի ջարդված զօրքերը ազատութիւն են որոնում Լիւկսէմբուրգի վրայով։ Ներկայումս մեծ ճակատամարտ է Րէյմսի և Արգօնի միջև։

◆ Ֆրանց-Յօզէֆը բուռն ցանկութիւն յայտնեց գնալ պատերազմի դաշտը և այնտեղ մեռնել։ Մինիստրները ամեն կերպ ետ պահեցին նրան։ Գեներալ Հէրցէնդօրֆը շտապով կանչվել է կայսրի մօտ։

◆ Բեռլինում սպասվում է ընդհանուր ապստամբութիւն։ Գերմանական զօրքերի պարտութիւնների տեղեկութիւնները սաստիկ յուզում են գերմանացիներին։ Ժողովուրդը փողոցներում աղաղակում է՝ «կորչի պատերազմը»։ Բացի Բեռլինից, Սակսօնիայում, Բաւարիայում և Վիւրտէնբէրգում սկսվել է խռովութիւն։ Շտէտտինում տեղի ունեցաւ ապստամբութիւն քաղցի պատճառով։ Ամենուրեք բողոք է կառավարութեան դէմ, որի քաղաքականութիւնը կործանում է Գերմանիան։

◆ Իտալացի յայտնի գրող դ'Անունցիօն իբրև կամաւոր զինուոր մտել է Պարիզի զօրաբանակի մէջ։

◆ Վիլհէլմ կայսրի պահանջով, ամերիկական դեսպանը մեկնել է գերմանական գլխաւոր բանակից։

◆ Սպանական թագաւորը, ի նկատի ունենալով ռուս գիտնականների և բարձրաստիճան անձերի միջնորդութիւնները, կարգադրել է Վիէննայի իր դեսպանին նպաստել պրօֆ. Մ. Կօվալէվսկիի ազատութեանը։

◆ Ռումինական մինիստրների խորհուրդը Թագաւորի նախագահութեամբ որոշել է համաձայնութիւն չը կապել Աւստրիայի հետ և աշխատել անպատճառ միացնել Տրանսիլվանիան Ռումինիայի հետ։

◆ Վերջին կռիւներում աւստրիացիք Սավայի և Դրինայի մօտ կորցրին աւելի քան 10,000 սպանված և վիրաւոր։

◆ Չէզոք պետութիւններից մեծ քանակութեամբ մթերք է մուծվում Գերմանիա։

◆ Մոսկվայում բացվեց հայկական հիւանդանոցը 200 մահճակալով։ Կառավարիչն է պրօֆ. Վլադիմիրովը։

◆ Սերբերը շտապով բերդեր են կառուցանում բուլգարական սահմանում։

◆ Ռումինական կառավարութեան անդամներից մէկը ուղարկված է Պետերբուրգ, որպէսզի բանակցէ Ռումինիայի երրեակ համաձայնութեան մէջ ընդունելու հարցի մասին։

◆ Բուխարէստում տեղեկութիւն է ըստացվել, որ գեներալ Աուֆենբէրգը գերի է ընկել ռուս զօրքերի ձեռքը։

◆ Անտվերպէնի մօտ լուրջ ճակատամարտ է գերմանացիների և բէլգիացիների միջև։

◆ Բրիւսէլում մեռել են Վիլհէլմ կայսրի երրորդ որդի Ադալբէրտը և Վիւրտէմբէրգի պրինց Կարլը ստացած վէրքերից։

◆ Լուրերի համաձայն, Իտալիան ետ է կանչել իր զինուորական կցորդներին Վիէննայից և Բեռլինից։

◆ Վիէննայում տիրում է օրհասական դրութիւն։ Բէրխտօլդը ամեն օր ստանում է սպառնական գրութիւններ։ Կեանքը մեռել է։

◆ Ամբողջ Իտալիայում ցոյցեր են լինում յօգուտ երրեակ համաձայնութեան միանալու։

◆ Ամերիկեան լեհերը կազմել են 1000 հոգուց բաղկացած զօրագունդ։

◆ Յունաստանում գլուխ է բարձրացնում ռազմական տրամադրութիւնը։ Վենիզէլօսը դառնում է արտաքին գործերի մինիստր։ Պատերազմը Թիւրքիայի դէմ համարվում է անխուսափելի։

◆ Սօֆիայում ազդեցիկ պալատականները պահանջել են Ֆէրդինանդ Թագաւորից դադարեցնել իր գաղտնի մտերմական կապերը Վիլհէլմ և Ֆրանց-Յօզէֆ կայսրների հետ։

◆ Ռուսաց գրական-գեղարուեստական խմբակը կազմում է կամաւոր սանիտարների խումբ, որ Արցիբաշեվի առաջնորդութեամբ մեկնելու է պատերազմի բեմը։

◆ «Н. В.»-ի թղթակիցը Լեաօեանից հեռագրում է. «Ճապօնացի օֆիցէրները գեներալ Օկեամի գլխաւորութեամբ խնդրում են հրատարակել, որ ոչ մի ճապօնացի որևէ բան չունի Ռուսաստանի դէմ, որ անցեալ պատերազմը փոխադարձ սխալ էր և որ ներկայումս ճապօնական զինուորական շրջաններում նկատվում է Ռուսաստանի հետ սերտ դաշն կնքելու ամենաանկեղծ ցանկութիւն»։

◆ Լօնդօնում գերմանական տներում գտնվում են ռումբեր և վառօդ։

◆ Բէլգիայում մի շարք պարտութիւններ կրելուց յետոյ, գերմանացիք նահանջում են դէպի հարաւ-արևելք և արևելք։

◆ Կալէից «Рѣчь»-ին հեռագրում են, որ բերդապետը հրամայել է ազգաբնակութեանը հեռանալ քաղաքից 2 օրվայ ընթացքում։ Քաղաքում կան ընդամենը 1000 գերմանացի զինուոր։

◆ Ստացված են նոր տեղեկութիւններ աւստրիացիների գործադրած բարբարոսութիւնների մասին։

◆ Ֆրանսիական կառավարութիւնը վերադառնում է Բօրդօյից կրկին Պարիզ։

◆ Վիլհէլմ կայսրը հեռագրեց իտալական Թագաւորին, թէ յաղթութեան կամ պարտութեան դէպքում Գերմանիան չի մոռանայ Թագաւորի դաւաճանութիւնը։ Էմմանուէլ Թագաւորը պատասխանեց, թէ նա չէր կարող դաւաճանել իր ժողովրդին։

◆ Յունաստանը Արգէնտինիայից մի դրէդնօուտ է գնել։

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 սեպտեմբերի

Կ. ՊՕԼԻՍ.—Սուլթանը Իշխանաց կղզիների մօտ դիտեց ռազմանաւերը, որոնց թւում էին նաև «Սուլթան Սէլիմը» և «Միդիլլին»։

Յայտարարված է, որ Բօսֆօր մտնող ամեն մի նաւ պարտաւոր է կանգ առնել ականներ դրված գծից դուրս։ Նաւը կուղարկվի զինուորական իշխանութեան մօտ։ Միմիայն վերջինիս թոյլտուութեամբ նաւը իրաւունք կունենայ անցնել նեղուցները։ Անցնելիս՝ արգելվում է լուսանկարչական գործողութիւններ կատարել։

(Լրագիրներից)

◆ Օդեսսայում հեռագիր է ստացվել այն մասին, թէ Թիւրքիայի ռազմական պատրաստութիւնները միայն տեսքի համար են. Թիւրքերն առ այժմ կատարում են գերմանացիների պահանջները, բայց զանազան պատրուակներով յետաձգում են պատերազմ յայտարարելը, որովհետև Թիւրքաց հասարակութեան մի մասը եռանդով դիմադրում է չէզոքութիւնը խախտելուն։

◆ «П. Курьеръ»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ բերդապահ զօրքի կազմի մէջ կան 7000 գերմանացի։

◆ Բ. Դուռը պատուիրել է կէս միլիօն ձմերային վերարկու զինուորների համար։

◆ Տեղեակ ռումին գործիչների ասելով, դէպի Կովկաս են ուղարկված մօտ կէս միլիօն թիւրք զինուոր։ 250,000 թիւրք զինուոր ուղարկված են Եգիպտոս, նոյնքան էլ պահված են երկրում՝ Բուլղարիայի դէմ։

◆ «Н. В.»-ի թղթակցի ասելով, Արզրումում և Տրապիզոնում թիւրքերը սպանել են քահանաների և սրի են քաշել շատ ընտանիքներ։

◆ Թիւրքիայում քարածխի սով է սպառնում։ Թիւրք իշխանութիւնները չը քաշվեցին խնդրել անգլիական դեսպանից, որպէսզի մատակարարվի անգլիական քարածուխ։ Դեսպանը մերժեց։

◆ Բօսֆօրի մօտ այս օրերս ռազմամթերք բեռնած նաւերից մինը, կպչելով ականի, պայթեց։ Խեղդվեցին 130 զինուոր։ Այդ հանգամանքը ստիպեց Բ. Դրան՝ բերել տալ Գերմանիայից ցանցեր՝ նաւերը պահելու համար։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Դուռը վճռեց պատերազմ յայտարարել այն պետութեան, ով չի ընդունի կապիտուլացիաները վերացնելու փաստը և կը ձեռնարկէ ակտիվ քայլերի։

◆ Կապիտուլացիաների վերացման հետ զուգընթաց, Կ. Պոլսում գտնվող օտարերկրեայ դրամատները իբրև դրաւական Թիւրքաց կառավարութեանը վճարելու են ամեն մինը նրանցից իր հիմնական դրամագլխի 10%-ը։ Բոլոր օտարերկրեայ ապրանքների մաքսերը կրկնապատկվելու են շուտով։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ գերմանացիները համոզված են, որ գոնէ կապիտուլացիաների վերացումը կը ստիպէ երրեակ համաձայնութեան պետութիւններին պատերազմ յայտարարել Թիւրքիային։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ Էնվէր-փաշայի սպանված լինելու լուրը թիւրիմացութիւն է։ Իրողութիւնն այն է, որ գահաժառանգի և Էնվէր-փաշայի միջև տեղի ունեցած միջադէպի ժամանակ երկուսն էլ վիրաւորվել են թեթև։

◆ Թիւրքիան վճռել է այս տարի վերջին անակնկալ փակել Դարդանէլը և պահանջել երրեակ համաձայնութեան պետութիւնից վերադարձնել Եգէյեան կղզիները։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ երրեակ համաձայնութեան կտրուկ քայլերից յետոյ, սկսվում է հակագերմանական շարժում։

◆ «П. К.»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ զօրքի և նաւատորմի անունով տրվող հրամանները գրվում են գերմաներէն։

◆ Ռումինիան և Գերմանիան համոզում են Թիւրքիային հաշտվել Յունաստանի հետ կղզիների հարցի առիթով։

◆ Գեներալ Սանդէրսը մեկնում է բուլղարական սահմանը, ուր կենտրոնացած են մեծաքանակ թիւրքական զօրամասեր։

◆ Լուրերի համաձայն, Էնվէր-փաշան համաձայնել է զինաթափութեանը։

◆ Թիւրքիան ուժեղացնում է զօրքերի կազմը Պաղեստինում։

◆ Էրզրումից հաղորդում են, որ անցեալ կիրակի, օգոստոսի 31-ին, թիւրքական իշխանութիւնը հրամայել է դաշնակցականների լիդէր Ռոստոմին՝ մեկնել Կ. Պոլիս։ Երբ ընկերները հաւաքվել են հրաժեշտի թէյասեղանի, ոստիկանութիւնը ներս է մտնում և այնտեղ հաւաքվածներից մի քանիսին կանչում և աշխատում է առանց աղմուկ հանելու զատ-զատ բանտարկել նրանց։ Իսկ ժամը 10-ի մօտերքը երեկոյեան, մի ոստիկան գալով Սէրվազի Սանասարեան վարժարանի տեսուչ Աբուլեանի տունը (ռուսահպատակ), խնդրում է վերջինին գնալ իր հետ՝ 5 րոպէով՝ իրանց տան դէմ գտնվող ոստիկանատունը. այդտեղից նրան տանում են ոստիկանապետի տունը, ուր ամբողջ չորս ժամ ձերբակալված պահելուց յետոյ յայտնում են, որ հրաման են ստացել անմիջապէս ճանապարհել նրան Ռուսաստան։ Կառքը արդէն պատրաստ լինելով դնում են մէջը և 6 ոստիկաններով ուղարկում են նրան Հասան-Կալէ, ուր 24 ժամ բանտարկելուց յետոյ, դարձեալ ոստիկանների ուղեկցութեամբ ուղարկում են Քեօթակ։ Այդտեղ նրան յայտնում են, որ պէտք է սպասել մինչև գիշեր և ապա նրան պէտք է սահմանից դէն շպրտեն։ Եւ որովհետև գիշերը սահմանից դուրս քշելը շատ վտանգաւոր կարող էր լինել, ուստի Աբուլեան երկար խնդրում է և հազիւ կարողանում է համոզել, որ ցերեկով տանեն սահմանը։ Ռուս սահմանապահ իշխանութիւնները սիրով ընդունում են նրան։ Նրա հետ թիւրքերը քշում են և մի քանի դաշնակցականների։

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներկայումս Պետրօգրադի դիւանագիտական շրջաններում տեղեկութիւններ են ըստացվել, որոնք հաստատում են Աւստրիայի և Գերմանիայի միջև եղած տարաձայնութիւնը, որը առաջացել է այն պատճառով, որովհետև վերջինս մերժել է բէալիզացիա անել աւստրիական փոխառութիւնը։

Այն հանգամանքը, որ գերմանական օգնութիւնը Աւստրիային հասել է նրանից յետոյ, երբ աւստրիական բանակը խիստ պարտութիւն կրեց, Պետրօգրադում ստացված տեղեկութիւնների համաձայն, Աւստրօ-Ունգարիայում մեծ անբաւականութիւն է առաջացրել։

Աւստրօ-Ունգարիայի և Գերմանիայի կապած պայմանագիրը հաշտութիւն կնքելու մասին՝ Պետրօգրադի քաղաքական շրջաններում ձևական բան է համարվում։ Իսկ ըստ էութեամբ որոշ տուեալներ կան, որ Աւստրօ-Ունգարիան պատրաստ է շուտով հաշտութեան մասին բանակցութիւններ սկսել պաշտօնապէս։

Մօտ ապագայում, դիւանագիտական շրջանների իրազեկ ներկայացուցիչներից մէկի ասելով, պէտք է յուսալ, որ Աւստրօ-Ունգարիան անջատ հաշտութիւն կը կայացնի սերբիական կառավարութեան հետ։

Հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են, որ սերբիական կառավարութիւնը ոչ մի պայմանով անջատ հաշտութիւն չի կայացնի Աւստրօ-Ունգարիայի հետ և պէտք է սպասի այն րոպէին, երբ Ռուսաստանը յարմար կը գտնի հաշտութեան մասին բանակցութիւններ սկսել։

ՄԱԿՍԻՄ ԿՕՎԱԼԵՎՍԿԻՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ռուս հասարակութիւնը յուզված է Մակսիմ Կօվալևսկիի վիճակի համար։ Մանաւանդ վերջին օրերս երևացին յուզիչ տեղեկութիւններ, որոնք ցաւալի արձագանք գտան ոչ միայն նրա բարեկամների՝ այլ և շատ ուրիշների սրտում։ Ռուս ինտելիգենցիայի լայն շրջանները, որ գիտէ և յարգում է Կօվալևսկիի անունը իբրև գիտնականի, քաղաքական և հասարակական գործչի և հրապարակախօսի, զայրացած են նրանց դէմ, որոնք մեղաւոր են նրան հասած աղէտների համար։

Այն զզուելի գործողութիւնների ցանկի մէջ, որոնցով արատաւորեցին իրանց մեր թշնամիները, նշանաւոր տեղ բռնելու են աւստրիական իշխանութիւնների անարգանքները մի գիտնականի դէմ, որի անունը վաղուց վայելում է լայն ժողովրդականութիւն կուլտուրական աշխարհի մէջ, նոյնիսկ նրա հայրենիքի սահմաններից դուրս։ Կօվալևսկիի վիճակով շահագրգռված չէ միայնակ ռուս հասարակութիւնը։

Մ. Մակսիմովիչի աշխատութիւնն թարգմանված են այլազգի լեզուներով, ն անձնական կապերը այլազգի գիտնականն րի հետ շատ ընդարձակ են և ամրաց բազմամեայ յարաբերութիւններով. վերջ պէս, Մակսիմ Կօվալևսկին յաճախ հանդ է եկել օտարազգի լսարանների առաջ իբ դասախօս։ Մենք տարակոյս չունինք, Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի և Ա մերիկայի գիտնական և գրական շրջանն չեն կարող անտարբեր մնալ դէպի բռնութիւնը, որ աւստրիացիները կատ րում են մի խոշոր գիտնականի և հասար կական գործչի անձնաւորութեան վրա, ո ամբողջ կեանքը եղել է իրաւունքի և ա դարութեան քարոզ։

Պէտք է ջերմագինս ողջունել որոշու Մոսկվայի Խաղաղութեան Ընկերութե վարչութեան, որ դիմել է արտաքին գո ծերի մինիստրին խնդրելով միջոցներ ձե առնել Կօվալևսկիին ազատելու համա Անհրաժեշտ է, որ այդ դիմումին օժ ռուսական ուսումնական ընկերութիւննե և հաստատութիւնները։ Բացի դրանից հա կաւոր է տեղեկացնել Մ. Կօվալևսկիի վ ճակի մասին և միւս երկրների կազմ կերպութիւններին և հրաւիրել նրանց անհրաժեշտ միջոցներ գործադրել։

Կարծում ենք, որ Գիտութեանց Ճեմարա նը, որ նորերս ընտրեց Կօվալևսկիին ան դամ, կարող է ստանձնել նախաձեռնութի այդ գործի մէջ։

(«Рус. Вѣд.»)

ԴԱՏԱՎՃԻՌՆ ԱՆՔԱԿՏԵԼԻ Է

Շահերի խոշոր ընդհարման միջոցի պարզվում է ազգերի, ինչպէս և անհատն րի հոգեբանութիւնը։ Բարոյական մեծու թեան չափը որոշվում է, երբ ճակատագիր է ենթարկված ահեղ վտանգի։

Սովորական կացութեան ժամանակ, եր կեանքի անիւը գլորվում է առանց խոր տակիչ խոչընդոտների հանդիպելու, մի մեր պաղդ շղարշ ափռվում է հոգիների ո սրտերի վրա և թագցնում նրանց արմատա կան թերութիւններն, ինչպէս և առաւելու թիւնները։ Միայն ընտրեալներին է պար գևված այդ շղարշը սուր հայեացքով թա փանցելու և թագնված խորդուբորդները տեսնելու բարձրագոյն ընդունակութիւնը։

Աւելի քան 40 տարի է, որ մտածող մարդկութեան 99%-ը, որ ամենուրեք թերատեսներից է բաղկացած, միաձայն գոռում, աղաղակում էր, թէ գերմանական ազգն առաջինն է աշխարհիս երեսին ոչ միայն իբրև ռազմական ոյժ, այլ և իբրև քաղաքակրթութեան գործօն։ Արտաքին փայլից կուրացած՝ չէին կարողանում տեսնել այն բարոյական նեխուածքը, այն մտաւոր կազմալուծումը, այն հոգեկան զզուելի ապականութիւնը, որ թագնված էին այդ շլացուցիչ արտաքինի տակ։

Գոռում ու աղաղակում էին, թէ Ֆրանսիան է այլասերված, նա է ապականված, նրան է սպառնում կործանում ֆիզիքական և բարոյական։ Փաստերը միմեանց ետևից այլ բան էին ցոյց տալիս, անբարոյականութեան վիճակագրութիւնը անկման կշիռը դէպի Գերմանիան էր թեքում, այնուամենայնիւ բնօրէն մի անգամ ստեղծված էր և կեղծիքը ճնշում էր անհերքելի նոյնիսկ առողջ մտքի տէր մարդկանց համար։

Եւ հարկաւոր էր մի համաշխարհային սոսկալի արիւնհեղութիւն, որպէսզի վաղուց յայտնված ճշմարտութիւնը, վերջապէս, մարդկութեան թերատես մեծամասնութեան համար դառնար ըմբռնելի։

Մեղադրում են Վիլհելմին պատմական հսկայական յանցանքի մէջ և նրան են համարում տիրող դժբաղդութեան պատճառը։ Բայց չէ՞ որ խելառ յանցաւորը իր ազգի հարազատ զաւակն է։ Չէ՞ որ ահա քառորդ դար է այդ ազգը պաշտում է նրան կուռքի պէս և հրճվում նրա իւրաքանչիւր ժեստերից։ Չէ՞ որ նոյն ազգը սկսած առաջին փիլիսոփայից մինչև վերջին ռամիկը այժմ իսկ, երբ արդէն ակնյայտ է նրա յանցանքը, դարձեալ ծափահարում է նրան և խրախուսում մէկը միւսից աւելի այլանդակ գործողութիւններով ու ցոյցերով։

Ո՞ւր մնաց գերմանական փառաբանված կուլտուրան, ինչո՞ւ նա չի բռնում համաշխարհային չարագործի ձեռքը և բարձրաձայն գոռում. «Բաւական է, կանգ առ, դու դէպի անդունդ ես քաշում մեզ»։

Հաւանական է, որ այդ ազգի դանդաղ միտքը մի օր, վերջապէս, արթնանայ և տեսնէ այն, ինչ որ վաղուց պիտի տեսնէր։ Բայց մի գուցէ այն ժամանակ այլ ևս ուշ լինի։ Գերմանիան արդէն բարոյապէս կործանվել է մարդկութեան աչքում, նրա բնօրէն իբրև կուլտուրական ազգի արդէն ապականվել է պատմութեան համար և այլ ևս դժուար է ձեռք բերել նախկին կեղծ հռչակը։ Բայց ցանկալի է և՛ նրա ֆիզիքական կործանումը իբրև մեծ պետութեան։ Այս է պահանջում մարդկութեան ապահովութիւնը, այս են պահանջում և՛ բնութեան օրէնքները, որոնց դատավճիռն անքակտելի է։

Շիրվանզադէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Հինգշաբթի, սեպտեմբերի 4-ին, փոխարքայի պալատում, կոմսուհի Վորոնցով-Դաշկովայի նախագահութեամբ կայացաւ պատերազմից վնասվածներին օգնող կովկասեան կոմիտէտի նիստը։ Անդամները ներկայ էին լիակատար կազմով։

Նախ և առաջ կոմիտէտի գործերի կառավարիչը կարդաց կոմիտէտի գործունէութիւնը, որից, ի միջի այլոց, պարզվեց, որ կոմիտէտը մինչև սեպտեմբերի 4-ը նուիրաբերութիւններ ստացել է 123,342 ր. 59 կոպէկ։

Ցետոյ կարդացվեց մի քանի հիմնարկութիւնների առաջարկութիւնը, որ ցանկանում են կոմիտէտի տրամադրութեան տակ դնել մահճակալներ, որոնց մասին մենք տեղեկութիւններ ենք տուել «Մշակում»։

Կոմիտէտը ընդունեց եկեղեցիներում և մզկիթներում պատերազմից վնասվածների համար հանգանակութիւն բանալու առաջարկութիւնը։

Որոշվեց խնդրել Վրաստանի էկզարխին, Կաթողիկոսին, շէյխ-ուլ-իսլամին և մուֆթիին թոյլատրել երկրի եկեղեցիներում և մզկիթներում հանգանակութիւն բանալ պատերազմի ժամանակ։

Վերջում կոմիտէտին զեկուցվեց ուսանող Աբրայեվի խնդիրքը Դղբա գիւղի (Լեռնային Օսեթիա) աղէտալի դրութեան մասին, ուր կարիքի հետ միասին մեծ զոհեր է տանում դիֆտերիտ համաճարակը։ Ինչպէս պարզվեց, բժշկական գործը այդ գաւառում զօրահաւաքի պատճառով թուլացել է, ամբողջ գաւառում մնացել է մի բժիշկ, որը, ի հարկէ, ամենուրեք, մանաւանդ հեռաւոր անկիւնները, ինչպէս Դղբա գիւղն է (Գորուց 100 վերստ հեռու), օգնութիւն չէ կարող հասցնել։ Թիֆլիսի նահանգապետի յայտարարութեան համաձայն, ինքը միջոցներ է ձեռք առնելու յիշեալ գիւղը բժշկական օգնութեան կողմից ապահովելու համար։ Ինչ վերաբերում է նիւթական օգնութեան, իշխ. Աբխազի յայտարարում է, որ այդ բանը ազնուականների կազմակերպութիւնը իր վրա է վերցնելու, որը և լիազօր մարդ է ուղարկում այդ գիւղը, տալով նրան անհրաժեշտ միջոցներ։

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Երբ զօրահաւաք յայտարարվեց և աշխատաւոր ձեռները հեռացան գիւղերից, այնտեղ զգացվեց գիւղատնտեսական մի շարք գործիքների և մեքենաների անհրաժեշտութիւն՝ հունձը քաղելու, ժողովելու, ծեծելու և հատիկը յարդից ջոկելու համար։ Նահանգական իշխանութիւններն էլ ուշադրութիւն դարձրին այդ անհրաժեշտութեան վրա և խոստացան ձեռք բերել այդպիսի մեքենաներ։ Կարսի նահանգապետը գիւղացիներին ուղղած իր ճառում խոստացել էր գիւղատնտեսական դաշտային մեքենաներ ձեռք բերել և տալ շինականներին օգտվելու համար. բայց ժամանակի կարճ լինելու պատճառով անհնար է եղել իրագործել այդ ծրագիրը։ Պէտք է սպասել, որ անհրաժեշտ գործիքներ ձեռք կը բերվին և առաջիկայ գարնանը կը տրվին երկրագործներին. աշխատող ձեռների պակասը կը լինի և յետագայում, և գարնանը, մինչև որ չը վերջանայ պատերազմը և պահեստի զինւորները չը վերադառնան։ Այդ երևի ուշ կը լինի, և պէտք է մտածել դաշտերի շահագործման մասին, այլապէս սովի ուրուականը հրապարակ կը գայ։

Շնող գիւղից «Մշակի» թղթակից Բ. Մկրտումեան, խօսելով գիւղատնտեսական մեքենաների անհրաժեշտութեան մասին, ասում է, որ այդ մեքենաները պէտք է ձեռք բերվին «գոնէ համայնական միջոցներով»։ Պէտք է ոչ թէ «գոնէ», այլ անպատճառ համայնական ույժերով գնել այդ գործիքները. անհատը եթէ ձեռք բերէ, իրա համար կը գործադրէ, համայնքը չէ կարող օգտվել։ Իսկ մենք գիտենք, որ հայ գիւղացի անհատը «ռիսկ» է համարում երկրագործական մեքենաներ գնելը. և շատ քիչ է պատահում, որ հայ գիւղացին ինքը ձեռնարկու լինի նորամուծութիւն մտցնելու իր տնտեսութեան մէջ։ Այստեղ պէտք է համայնական գործ. անպատճառ գիւղական համայնքը պէտք է ձեռք բերէ գործիքները, որից բոլորը հաւասարապէս կարող են օգտվել, բոլորը պատասխանատու կը լինեն փչանալու դէպքում և այլն։ Այնպէս որ՝ համայնական սկզբունքը ոչ թէ մի երկրորդական բան է, որին պէտք է դիմել մի քանի փորձից յետոյ և «գոնէ» ասելով, այլ առաջնակարգ և լուրջ խնդիր, որի աջող լուծումն անպայման դրական կը լինի, ուստի և ցանկալի։ Եթէ կազմակերպված է գիւղական համայնքը՝ նա կարող է իր պէտքերի համար և գործիքներ գնել և զանազան պատահարների ազդեցութիւնը մեղմել։

Կազմակերպութիւն և գիւղական համայնքներում և հասարակական գործերի մէջ։ Կազմակերպման և միահամուռ գործունէութեան պակասն է զգացվում և մեր ազգային մեծ հոգսի՝ հայերիս դարաւոր իղէայի համար։

Գ. Տէր-Թուրինեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» հետևեալ համարը, Աստուածածնի տօնի պատճառով, լոյս կը տեսնի չորեքշաբթի, սեպտեմբերի 10-ին։

◆ Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը սեպտեմբերի 5-ին քաղաքային կենտրոնական կոմիտէտին է յանձնել 2000 ր. պատերազմից վնասվածների օգտին։

◆ Առևտրական բանկը պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրոնական կոմիտէտին նուիրաբերել է 5000 րուբլի։

◆ Միքայէլեան հիւանդանոցի բժիշկները և ծառայողները որոշել են իրանց ստացած ռոճիկներից պատերազմի բոլոր ժամանակ վիրաւորների և պահեստների ընտանիքների օգտին յատկացնել 2%։

◆ Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհուրդը որոշել է լոտո խաղի մարկից 5% յատկացնել Թիֆլիսցի պահեստիների ընտանիքների օգտին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. ծառայողները որոշել են իրանց ռոճիկների 2% յատկացնել վիրաւորված զինւորների հիւանդանոցին, որ Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութիւնը բաց է անում իր շինութեան մէջ։

◆ Խնդրվում է այն անձերից, որոնք հրաւիրված են եղել օգոստոսի 31-ին «Մշակի» խմբագրատանը կայացած խորհրդակցութեան մասնակցելու, մտնել այսօր կամ վաղը, ժամը 11—1 խմբագրատուն, ստորագրելու ժողովի արձանագրութիւնը։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, Հասարակական ակումբում (Աբաս-Աբադեան փող. տուն Կ. Հ. Բ. Ընկ., № 7) կը կայանայ ակումբի անդամների և դասախօսների խորհրդակցութիւնը, քննելու ներկայ տարում լինելիք ռեֆերատների և զրոյցների ծրագիրը։

◆ Պետրօգրադի Հեռագր. Գործակալութեան Թիֆլիսի բաժանմունքը երէկվանից տեղափոխվել է Օլգինեան փող. № 3. (տուն Մելիք-Ազարեանի)։

◆ Ի նկատի ունենալով, որ ներկայումս կարող են առանձնապէս շատ դիմումներ լինել, երկրի զանազան մասերում Կարմիր Խաչի ռուսական ընկ. տեղական կոմիտէտներ բանալու մասին, այդ պատճառով փոխարքայի քաղաքացիական մասի օգնականը յայտնել է Թիֆլիսի նահանգապետին, որ Կարմիր Խաչի ընկերութեան կանոնադրութեան համաձայն՝ տեղական կոմիտէտները կարող են բացվել միջնորդութիւն յարուցանելով Կարմիր Խաչի տեղական վարչութեան առաջ, համաձայնութեամբ երկրի նահանգապետի, ըստ որում Կարմիր Խաչի ընկ. գործունէութեան միութիւնը պահպանելու նպատակով, Կովկասի տեղական բոլոր կոմիտէտները իրանց մտադրութիւնները և գործերը համաձայնեցնում են Կարմիր Խաչի կովկասեան շրջանային վարչութեան հետ։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող կովկասեան կոմիտէտը իր՝ օգոստոսի 28-ի նիստում որոշել է խնդրել միւս քաղաքների նոյնանման կոմիտէտների և կազմակերպութիւնների նախագահներին կամ ներկայացուցիչներին, որ վերջիններիս՝ Թիֆլիսում լինելու դէպքում, կոմիտէտի հետ համագործակցութեան կապ հաստատելու համար, կոմիտէտի անդամի իրաւունքով յաճախել կոմիտէտի շաբաթական նիստերին, որ լինում են հինգշաբթի օրերը, երեկ. ժամը 8-ին, փոխարքայի պալատում։ (Կոմիտէտը խնդրում է միւս թերթերին արտատպել այս հաղորդութիւնը)։

◆ Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհու տեղական պահեստը որպէս նուիրաբերութիւն Թիֆլիսի առևտրական բանկից ստացել է 2500 ր., Արշակ Ն. Միլեանից՝ 500 րուբլի։

◆ Ամառային արձակուրդներից յետոյ քաղաքային դումայի առաջին նիստը կը կայանայ սեպտեմբերի 15-ին։ Քաղաքագլուխը առաջարկել է քաղաքային վարչութեան անդամներին, թէ ինչ գործեր են պատրաստ իրանց բաժանմունքներում դումա մտցնելու համար։

◆ Երկրորդ կարգի ռեստօրան պահողները դիմել են նահանգապետին, խնդրելով թոյլ տալ իրանց տեղում, այսինքն ռեստօրաններում գինի ծախել։ Խնդրատուները իրանց խնդրի մէջ ասում են, որ հակառակ դէպքում իրանք կը քայքայվեն բոլորովին։

◆ Քաղ. առևտրա-տնտեսական վերահսկիչների տեղեկութիւնների համաձայն, վերջին օրերս Թիֆլիս են բերվում մեծ թւով անասուններ։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Բաթումից հեռագրում են, որ պետական բանկի տեղական ճիւղը Թիֆլիս տեղափոխելը, մնացած մասնաւոր բանկերի վարկերի փակումը և առևտրի դադարումը Բաթումի վաճառականութեանը անանկութիւն են սպառնում։ Վաճառականութիւնը պէտք է անմիջապէս գանձարանից մի միլիոն րուբլու բողոքված մուրհակներ յետ գնի։ Անկարող լինելով զեղչել իրանց մուրհակները, վաճառականութիւնը դիմել է բօրսային կոմիտէտին, որը, բերդի կոմենդանտի պաշտպանութեամբ, հեռագրով միջնորդութիւն է յարուցել ֆինանսների մինիստրութեան առաջ մօրատօրիումի մասին, նոյնպէս և այն մասին, որ պարտաւորեցվի տեղական գանձարանին զեղչել մուրհակները։

◆ Եկատերինօդարում զէնքի կանչված պահեստիների ընտանիքների օգտին կազմակերպված դրօշակների օրը հանգանակութիւն է եղել 17,537 ր. 64 կոպէկ։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների Թառուզ կայարանից հաղորդում են, որ սեպտեմբերի 3-ին, երեկոյեան ժամը 4-ին, նախ քան արևի մայր մտնելը նկատվել է մրջյունների ամպանման երամ։ Դրանք նման են եղել նոր ծնվող ճանճերի, սպիտակասաւան, այնպէս որ, սկզբում թւում է եղել թէ ձիւն է գալիս։ Տեղական ազգաբնակութեան մէջ այս անսովոր երևոյթը մեծ զարմանք առաջացրեց։ Անցեալում ոչ-ոք այդպիսի բան չէ տեսել։

◆ Ախալցխայից հաղորդում են, որ անհրաժեշտ մթերքների գները բարձրացել են։ Տեղական բոլոր դպրոցներում զբաղմունքները սկսվել են արդէն։ Միաժամանակ հաղորդում են, որ ցորենի բերքը Ախալցխայի շրջանում բաւարար է եղել, իսկ գարին լաւ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Կ. Պօլիս, 15 օգոստոս

Շաբաթը անցաւ բուռն յուզումներու մէջ, վասնզի ամեն ակնկալութեան հակառակ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈՒԺԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մեր ժամանակի երկու յայտնի հեղինակութիւններ՝ անգլիացի Հէյգը և ֆրանսիացի Բրօուն-Սէկարը արտասանել են իրանց «նոր խօսքը» հիւանդութիւնների բուժման մասին։

Պրօֆ. Հէյգը իր փայլուն աշխատասիրութեամբ՝ «Միզային թթուտը որպէս խրօնիքական հիւանդութիւնների հիմնական պատճառ» խորագրով՝ անհերքելի կերպով ապացուցել է, որ բազմաթիւ և զանազան հիւանդութիւնները, որոնց ենթակայ է մարդը, շուտ վրա հասնող զառամութիւնը եւ մինչեւ անգամ մահը առաջ են գալիս նրանից, որ օրգանիզմը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ միզային թթուտ։

Գիտական նորագոյն հետազօտութիւններով ապացուցված է, որ մեր ներկայ ժամանակի կուլտուրական մարդը չափազանց շատ է այնպիսի կերակուր գործածում, որ պարունակում է իր մէջ թունաւոր տարրեր (միս, ձուկ, սուրճ, շօկօլադ, կակաօ և այլն)։

Քանի օրգանիզմը ջահել է և առողջ, նա կարողանում է առանձին թթւուտների եւ ֆերմենտների օգնութեամբ, որ առաջ են գալիս նրա սերմնային գեղձերից և անցնում արեան մէջ, թթւեցնել թունաւոր պուրինները եւ դուրս վանել նրանց երիկամունքների միջոցով։ Բայց հէնց որ օրգանիզմի ֆունկցիաները թուլանում են, որ նկատելի է հիւանդութիւնների կամ ծերութեան ժամանակ, այդ դէպքում թուլանում է նաեւ սերմնային գեղձերի գործունէութիւնը և նուազում է կամ բոլորովին սպառվում այդ գեղձերից դէպի արեան մէջն անցնող փրկարար թթւուտն ու ֆերմենտը, որի հետևանքը լինում է այն, որ արեան մէջ առատանում են պուրինները, որոնցից և առաջանում է միզային թթուտը։

Միւս գիտնականը՝ պրօֆ. Բրօուն Սէկարը՝ իր աշխատասիրութիւններով և բազմաթիւ դիտողութիւններով թէ իր վրա և թէ իր հիւանդների վրա՝ ոչ պակաս փայլուն կերպով ապացուցել է, որ «կենդանիների սերմնային գեղձերից հանված հիւթը պարունակում է իր մէջ հէնց այն թթւուտներն ու ֆերմենտները, որոնք բացակայում են ծերերի, հիւանդների և թուլակազմների արեան միջից, և որ այդ հիւթը, մուտք գործելով արեան մէջ արագացնում է նիւթերի փոխանակութիւնը, հալեցնում և ոչնչացնում է պուրիններն ու միզային թթուտը, այսինքն՝ անհետացնում է խրօնիքական հիւանդութիւնների պատճառները և օրգանիզմը դնում է վերածնութեան իսկական շաւղի վրա»։

Այժմ միայն յայտնի է բժիշկների շրջանում եղած այն աջողութիւնը, որ ունի կենդանիների սերմնային գեղձերից պատրաստված հիւթը—Դ. ԿԱԼԷՆԻՉԷՆԿՕՅԻ լաբօրատօրիայից։ Արդէն 3000-ից աւելի բժիշկներ նշանակում են Դ. ԿԱԼԷՆԻՉԷՆԿՕՅԻ լաբօրատօրիայում պատրաստված սերմնային հիւթը այնպիսի հիւանդութիւնների ժամանակ, որոնք առաջանում են օրգանիզմի մէջ պուրինները և միզային թթուտը կուտակվելուց, այն է՝ նեվրաստենիայի, իստերիայի, նեվրալգիայի, էպիլէպսիայի, սեռական թուլութեան, զառամութեան, արեան պակասութեան, հիծուածութեան եւ բեկի, կաթուածի, պօդագրայի եւ յօդացաւի, շաքարահիւանդութեան, դիաբէտի, տուբերկուլօզի, բրօնխիտի, արտէրիօսկլէրօզի եւ գիրութեան, գլխացաւի եւ անքնութեան, ողնուղեղի հիւծման, մարսողութեան եւ սրտի գործունէութեան անկանոնութեան, տիֆից, քութէշից, դիֆթերիտից, սիֆիլիսից, ծննդաբերութիւնից, անդամահատութիւնից առաջացած թուլութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։

Դ. ԿԱԼԷՆԻՉԷՆԿՕՅԻ լաբօրատօրիայի սերմնային հիւթի բուժիչ նշանակութիւնը, բժիշկների կարծիքով, ԽՈՇՈՐ Է, որ երևում է հետևեալ դիտողութիւններից։

Պ. Պ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ներքին հիւանդ. կաֆեդրայի պատկանողի պրօֆ. Ա. Մ. ՇԻՏԼՕՎԻ դիտողութիւնը։ Խարկով, Գօգօլի փողոց № 6.

«Չափազանց շնորհակալ եմ Ձեզանից Ձեր հիանալի պրէպարատն (սերմնային հիւթ՝ Դ. Կալէնիչէնկօյի լաբօր.) ինձ ուղարկելու համար։ Թէ ես և թէ իմ եղբօր-որդին լաւ հետևանքներ ունեցանք։ Մէկ և կէս ամսվայ ընթացքում իմ մկանային ույժերս ըստ դինամէտրի աւելացան մինչև 4 կիլօ (տարիքս 76 է), տրամադրութիւնս ակներեւ փոխվեց դէպի լաւը, ախորժակս բաւականին աւելացաւ։ Մի ամսից յետոյ, եղբօր-որդուս հազը և խորխը դադարեց, ույժերը բաւականին աւելացան։ Այն հիւանդները, որոնց խորհուրդ էի տուել Ձեր պրէպարատը գործածել, շատ գոհ մնացին։ Ես իմ կնոջս բժշկում էի Սպէրմին-Պէլով, սակայն հետևանքները բացասական եղան»։

Բժշկապետ Կ. ՇՉԵԿԻՆԻ (Խարկովի համալսար. ախտանոց) դիտողութիւնը։

«Ես ունէի ստամոքսի կատառ և 4—5 օր շարունակվող կապութիւն։ Բժշկական ոչ մի միջոց ինձ չօգնեց. բայց հէնց որ սկսեցի ընդունել սերմնային գեղձերից պատրաստված հիւթը, մինչև երկու շաբաթը կանոնաւորվեց իմ ստամոքսը, և այժմ ամեն օր կատարում եմ իմ բնական պահանջը։ Երբ ես ժամանեցի Եալտա, իմ մարմնի կշիռը 3 պուդ 20 ֆունտ էր. իսկ այժմ՝ 3 պուդ 28¾ ֆունտ է։ Կլիմայական ոչ մի պայման առաջին երկու ամսում ինձ ոչինչ չօգնեց, այլ, ընդհակառակն, ես աւելի թոյլ էի զգում ինձ և նիհարում էի. բայց հէնց որ սկսեցի խմել Ձեր դեղը, երեք շաբաթից յետոյ ես ինձ 60 տարով ջահել էի զգում (ինքս 60 տարեկան եմ)»։

3) Բժշկ. Ա. Մ. ԿՆՅԱԺՈՎՍԿԻ դիտողութիւնը։ Կաժդանի գիւղ, Նովօվիլէյսկի գաւառ, Վիլն. նահանգ։

ա) «Մի 47 տար. հիւանդ, թոքախտաւոր, գտնվում էր մահվան ճիրաններում։ Երկրորդ սրուակ դեղը ընդունելուց յետոյ հիւանդը բոլորովին վերականգնվեցաւ, թոքերի թարախային պալարներն սպիներով ծածկվեցին, և քննելիս՝ սարսափելի հիւանդութեան ախտանշանները այլևս չէին նկատվում։ Թէ ես և թէ իմ պաշտօնակիցները հիացած ենք Ձեր դեղի փայլուն հետևանքներից»։

բ) «Մի պառաւ կալուածատիրուհի, որ հիւանդ էր յօդացաւով և ջրգողութեամբ, այդ դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ՝ կարողանում է երկարատև զբօսնել։ Ուռոյցքները չքացել են, նոյնպէս և՝ բոլոր յօդային ցաւերը։ Իրան 20 տարով ջահելացած է զգում»։

գ) «Մի քահանայ, 52 տարեկան, որ հալումաշ էր եղել մալարիից, մի սրուակ ընդունելուց յետոյ առողջացաւ։ Ամեն ինչ փորձել էր, սակայն անօգուտ. իսկ 3 շաբթվայ ընթացքում, այն էլ մի սրուակ ընդունելով, մարդը վերականգնեց իր առողջութիւնը»։

«Ես գնում եմ Բերլին և Պարիզ, ուր Բժշկ. Ընկ. մէջ պիտի զեկուցում կարդամ իմ փորձերի մասին՝ Դ. Կալէնիչէնկօյի սերմնային գեղձերից պատրաստված հիւթի վերաբերմամբ»։

4) Բժ. Կ. ԲԵՆՏԿՕՎՍԿԻ դիտողութիւնը. Պոլտավա։

«Ինքս ընդունելով Դ. Կալէնիչէնկօյի «սերմնային հիւթը» օրական 2 անգամ, 30 կաթիլից, նկատեցի իմ մէջ ակնյայտ փոփոխութիւն դէպի լաւը։ Ման գալ կարողանում եմ երեք անգամ աւելի, քան առաջ էր։ Առաջները իմ փորձած սպէրմինը այդ աջողութիւնը երբէք չունեցաւ։ Իրաւ, որ սերմնային հիւթը արագացնում է մարդու օրգանիզմի մէջ գտնված միզային աղերի նուազումը, որը ես նկատել եմ իմ մէզը անալիզի ենթարկելով»։

5) Բժ. Պ. Ա. ԱՆՏԻՊԻՆԻ դիտողութիւնը։ Դեգօվիչի կայար, Մ.-Վ.-Ր. երկաթուղի։

«Մի վարժուհի 28 տար. (Ս. Պ.) ունեցել էր թոքերի բորբոքում, մի տարուց յետոյ՝ տիֆ, որից յետոյ տեղի էր ունեցել ուժեղ անէմիա և թուլազգացութիւն։ Հիւանդը ամբողջ երկու ամիս պառկած էր անկողնում, և ոչ մի դեղ չէր օգնում նրան։ Մէկ խորանարդ միլ. արեան մէջ ես խոշորացոյցով գտայ 3.700.000 կարմիր գնդակներ։ Իսկոյն ես գրեցի նրան դեղատոմս՝ գործածելու սերմնային գեղձերից քամված հիւթ, և չորս սրուակ ընդունելուց յետոյ հիւանդի անէմիան սկսեց արագաբար անհետանալ։ Վեց սրուակից յետոյ ես հաշւեցի նրա արեան կարմիր գնդակները և գտայ 6.300.000 հատ։ Հիւանդի ույժերը այնքան վերականգնվեցին, որ նա կարող է այժմ պարապել երեխաների հետ։ Ուշադրութեամբ քննելով և ուսումնասիրելով պրէպարատը, ես կարող եմ համարձակ ասել, որ դա ամենալաւ և ուժեղ դեղ է շատ հիւանդութիւնների դէմ»։

6) Նովգօրօդի զինւոր. հիւանդ. աւագ բժիշկ ՏԱԼԻՋԻՆԻ դիտողութիւնը։

«Մօտ 70 տարեկան մի պառաւ կին հիւանդ էր ամբողջ երկու տարի խրօնիքական յօդացաւով։ Երկարատև հիւանդութիւնը և զառամութիւնը հիւանդին կատարեալ կմախք էին դարձրել։ Հիւանդը մի տարուց աւելի պառկած էր անկողնի մէջ։ Չորս ամիս անցնելուց յետոյ, երբ հեղուկ դեղի ամբողջ պաշարը նա ընդունեց, հիւանդը կարողացաւ ոտքի կանգնել և ազատ ման գալ սենեակում»։

7) Վարշավայի մանկ. հիւանդ. աւագ բժիշկ Ա. ԴՕԲՐԺԱՆՍԿԻ դիտողութիւնը։

«Դ. Դ., ոսկրացաւով բռնված մի ծերունի, որի ձեռքերի մատները վերջերս սկսել էին սաստիկ ցաւեր զգալ, Ձեր դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ՝ ցաւերը նուազեցին և ոտները սկսեցին ազատ շարժումներ անել։ Բայց գլխաւորն այն է, որ մէզի մէջ եղած միզային թթուտը, որի վերջին անալիզը ցոյց էր տուել հազարին (pro mille) 4,27, գտնվում էր հալված դրութեան մէջ, այնպէս որ խոշորացոյցով քննելիս հազիւ մի քանի բիւրեղիկներ էին նկատվում»։

8) Բժ. Վ. ՄԱՏՈՒՍԵՎԻՉԻ (Լուբնա) դիտողութիւնը։

«Մի հիւանդ, 26 տարեկան, նեղ կրծքով, թուլակազմ, որ մի քանի անգամ արիւն էր թքել, ախորժակը վատ, թախծոտ, իր հիւանդութեան (թոքախտ) վատ հետևանքները նախազգացող, բժշկվում էր ինձ մօտ։ Ես նշանակեցի նրան ընդունել Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայում պատրաստված սերմնային գեղձերից քամված հիւթից։ Հիւանդի ախորժակը բացվեց, տրամադրութիւնը օրէ-օր լաւացաւ։ Մինչև երկու շաբաթը երիտասարդն աշխատել սկսեց։ Մինչև երկու ամիսը նրա մարմնի կշիռը 21 ֆունտով աւելացաւ։ Հազը դադարեց։ Կարող եմ համարձակ անել այս եզրակացութիւնը, որ «սերմնային հիւթը վերականգնում է օրգանիզմի «ույժերը՝ կռւելու վտանգաւոր հիւանդութիւնների դէմ, և այդպիսով՝ այս կամ այն հիւանդութիւնից երերված առողջութիւնը նորից վերականգնում է»։

Հիւանդների անձնական դիտողութիւններ

9) Գ. Իվանով, ծովային տէխնիկ-ջրօրդ, գնդապետ (Մոսկվա, Մեծ Եակիմանկա)։

«Մարմնիս աջ կողմից ես կաթուած էի ստացել։ Ոչ ոքի չէի ճանաչում և գիտակցութիւնս կորցրել էի։ Իմ պաշտօնակիցներիս թախանձանքը՝ վերյիշել աշխարհի շուրջը եղած նաւարկութիւնը Թագաժառանգ Ցեսարևիչի—այժմ բարեբաստիկ Թագաւորող Կայսեր—հետ՝ ես անկարող էի լինում կատարել։ Ամեն ինչ ինձ համար կորած էր։ Ես սկսեցի ընդունել սերմնային գեղձերից քամված հիւթ։ Եւ այժմ, շնորհիւ Աստուծոյ ողորմութեան, ես ինձ այնպէս առոյգ, կատարելապէս առողջ և ուժեղ եմ զգում, որ բոլոր իմ ծանօթները չեն կարողանում որոշել, թէ մարմնիս որ մասն էր կաթուածի ենթարկված։ Ինձ, իսկապէս ասած, վերադարձել է երկրորդ երիտասարդութիւնը»։

10) Քահանայ Սլաստենով Ա. Վաս. (Մալայա-Կնեազևկա, Ատկարսկ. գաւ., Սարատովի նահ., «Բ. Կոլէնի» կայարան)։

«Իմ փեսայ՝ Ա. Ս. քահանան սաստիկ հիւանդ էր. շարունակ սաստիկ քրտնելուց՝ ամեն օր 3 շապիկ էր փոխում։ Նա այնքան էր թուլացել, որ գլուխը բարձրացնել չէր կարողանում։ Սերմնային գեղձերից քամված հիւթից մի սրուակ ընդունելուց յետոյ հիւանդը իր մէջ սկսեց ույժ զգալ, ախորժակը բացվեց, սկսեց հանգիստ քնել և շուտով բոլորովին ապաքինվեց։ Այժմ նա իրան այնպէս լաւ է զգում, որ սրանից 10 տարի առաջ էլ այդպէս չէր զգում»։

11) Քահանայ Դ. Րօզով (Պետրօվսկ, Ֆիլիպպօվօ-Գօրիայնօվեկի գիւղ)։

«Մի քանի տարի շարունակ ես ունէի մայասիլ հիւանդութիւնը։ Օգոստոս ամսից սկսած ընդունեցի սերմնային գեղձերից քամված հիւթը. այդ օրվանից սկսած արիւնհոսութիւնս դադարեց, կապութիւնս անցաւ և բնական պահանջս կատարվում է կանոնաւոր։ Քունս, ախորժակս և ինքնազգացմունքս շատ լաւ է»։

12) Տիրացու Ի. Ա. Նարբէկով (Կոստրոմա, գեմստվային պոստ, Վօզնեսենսկի գիւղ)։

«Ես անցեալ ամառ ընդունեցի սերմնային գեղձերից պատրաստված հիւթից 2 սրուակ՝ մարմնիս ձախ կողմում ստացված կաթուածիս դէմ։ Ես ինձ այնքան լաւ եմ զգում, որ կարողացայ չորս անգամ գնալ ոտով մինչև Կոստրոմա, 25 վերստ տարածութիւն, և վերադառնալ»։

13) Բէլեակօվ Միխ. (Աչին, Պերմի նահ.)

«Ես հիւանդ էի, ման գալ չէի կարողանում, ցաւում էր թէ կուրծքս և թէ մէջքս։ Երկու ոտս թուլացել էին, այնպէս որ առանց կողմնակի օգնութեան չէի կարողանում անկողնի մէջ շուռ գալ։ Երբ սերմնային հիւթից մի սրուակ խմեցի, ես անկողնից վեր կացայ, և ի զարմանս բոլորի՝ սկսեցի ման գալ, և այժմ զգում եմ, որ ույժերս վերականգնել են»։

14) Նաւ. Ա. Կվաշուկ (Զերվոննօէ կայարան, Վոլ. նահ.)։

«Ես ձեռների յօդացաւ ունէի, նոյնիսկ չէի կարողանում ծծկեր երեխայիս ձեռներիս վրա պահել, այնպէս որ աղախինս ստիպված էր լինում երեխային գօտիով կապել կրծքիս, որպէսզի կարողանայի կերակրել նրան։ Սերմնային հիւթից երեք սրուակ ընդունելուց յետոյ ես բուժվեցի և մինչև անգամ զգում էի ամբողջ օրգանիզմիս մէջ բարելաւումն»։

15) Ալէքսանդրա Սմիրնովա (Տուլա, Կրիվայա-Բելյայեվսկայա փող., տ. Բօրիսովի)։

«Չորս տարի սրանից առաջ ես իմ 7 տարեկան երեխային բժշկեցի սերմնային հիւթով։ Նա սարսափելի բրօնխիտ ունէր։ Երեխան մինչև այն դրութեան հասաւ, որ ման գալ չէր կարողանում, համարեա թէ խեղդվում էր, նիհարում, գունատվում և ոչինչ ուտել չէր կարողանում։ Բժիշկները ասում էին, որ նա ժամանակով թոքախտ պիտի ստանայ։ Ես սկսեցի երեխայիս տալ սերմնային հիւթ, օրական 3 անգամ՝ 7 կաթիլ իւրաքանչիւր անգամը։ Նա դրանից յետոյ սկսեց ուտել, շտապով կազդուրվել, թողեց հազալը, թանչոց բոլորովին չունէր և սկսեց գիրանալ։ Նա մինչև օրս էլ այնպէս գէր է, սովորում է դպրոցում և աւելի առողջ է, քան իր միւս եղբայրները»։

Մնում է ցանկալ, որ բազմաթիւ բժիշկներ և հիւանդներ, որոնք նուազ չափով անգամ կասկածում են Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայում պատրաստված «սերմնային հիւթի» բուժիչ ազդեցութեան վերաբերմամբ, անձամբ փորձէին այդ պրէպարատը։

Պ. պ. բժիշկներին «Սերմնային հիւթը», Դ. Կալէնիչէնկօյի լաբօր. պատրաստված դիտողութեան համար ուղարկվում է GRATIS.

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ

Դ. ԿԱԼԷՆԻՉԷՆԿՕՅԻ լաբօր. պատրաստված սերմնային հիւթով բուժումներ անելուն վերաբերեալ ընդարձակ գրականութիւնը (մօտ 400 բժիշկների դիտողութիւններ)։

Դ. ԿԱԼԷՆԻՉԷՆԿՕՅԻ լաբօր. ՍԵՐՄՆԱՅԻՆ ՀԻՒԹԻ մի սրուակը արժէ 2 ր. 50 կ.։ Ճանապարհածախսը (կարելի է և վերադիր վճ.)—40 կ.։ Մի սրուակից աւել պատուիրողները ճանապարհածախսը չեն վճարում։

Հասցէն՝ Органотерапевтическая лабораторія Д. Калениченко, Москва, Козловскій пер. соб. д., № 10, кв. 267.

(М. 255913) 4—3

զէնքի տակ կանչուեցան հետզհետէ 32, 33, 34 տարեկան երիտասարդները։ Այսպէս՝ մինչև 40 տարեկանները զէնքի տակ առնուեցան մեծ խեղճութեան ու խուճապի մատնելով ժողովուրդը, վասնզի այդ տարիքի մէջ գտնուող բոլոր քրիստոնեաները և մայրաքաղաքցի իսլամները բնաւ գաղափար չունէին զինուորական կեանքի մասին։

Այդ անվարժութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն՝ զէնքի տակ կանչուածներէն հասած սրտաճմլիկ նկարագրութիւնները կատարեալ սարսափի մը պատճառ կըլլան, և հազիւ իրենց օրապահիկնին հայթայթելու կարող ընտանիքի հայրեր, պարտքի տակ մտնելով, 40 տեղէ մուրալով կը հայթայթեն փրկանքի 43 լիրաները և կուտան։

Ժողովուրդը այս կերպով ենթարկուեցաւ կատարեալ կողոպուտի ու թալանի։ Իսկ անոնք, որ իրենց մէջ քաջութիւն զգացին բանակ մեկնելու և զէնքի տակ մտնելու, անոնք ալ չարչի ենթակայ ըլլալու և մեռնելու սպառնալիքին տակ կը գտնուին, զի իսկական վիճակը թիւրք բանակի՝ սոսկալի է։

Զինուորներու մասին և ոչ մէկ խօսք։

Օրերով անօթի կը պահուին շատ անգամ զինուորները, որոնցմէ մեծագոյն մասը զինուորական ծառայութեանց չէ, որ կը գործածուին. այլ ճամբաներու շինութեան։

Աղտոտութիւնն ու անմաքրութիւնը ամէն երևակայութենէ դուրս է, կըսուի։ Կըրք-Քիլիսէի մէջ օրական մէկ պաքսիմաթ մը միայն կը տրուի եղեր զինուորներուն։

Այդ ողբալի վիճակին բնական է որ ոչ ոք կուզէ ենթարկուիլ, և ասոր համար է որ շատեր — իսլամ և քրիստոնեայ — կերթան վճարելու բէդէլ, զինուոր չառնուելու համար։

Պատերազմի մը հաւանականութիւնն այս շաբթուան սկիզբը խիստ նուազած կը թուէր, վասնզի Թալէաթ և Ճավիտ բէյերու Բուքրէշ ուղևորութեան եզրակացութիւնը բանակցութիւն մը եղած էր, որ նոր կը սկսէր։ Սակայն այսօր յանկարծ կացութիւնը փոխուեցաւ։ Սելանիկէն հաղորդուած հեռագիրներէ կը հասկցուի, որ Յունաստան պատրաստութիւններ կը տեսնէ ինքզինքը պաշտպանելու համար, բուլղարական սահմանագլուխէն գալիք յարձակման մը դէմ, որ թիւրքերէն պիտի գայ։

Ասոր ալ պատճառը թիւրքերուն չափազանց պահանջկոտ դարձած ըլլալն է։ Զօրակոչին հետևանօք զէնքի տակ պատրաստ բանակ մը ունենալնուն վրայ հիմնուած՝ վերջին մէկ քանի օրերու մէջ թէև ողջին տնով մը, սակայն շատ պահանջկոտ շեշտով մը խօսիլ սկսան կղզիներու խնդրոյն վրայ։

Օրինակի համար՝ «Թասֆիրի Էֆքեար» օր մը առաջ գրած է, թէ բալկանեան զինակցութեան վերակազմութեան ատեն՝ Յունաստան ալ կրնայ այդ միութեան մէջ առնուիլ, եթէ անիկա իր նախկին սահմաններու մէջ պարփակուի։

Ասիկա խօսելու այնպիսի եղանակ մըն է, որ կրնայ պատերազմի առաջնորդել։ Եթէ մեր պատուիրակները՝ Թալէաթ և Ճավիտ ալ նոյն կարծիքն ունին այն, ատեն նոր պատերազմի մը նախօրեակին առջև կը գտնուինք։

Հայորդի

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատամնաբուժարան

Հիմնված ատամնաբոյժ

Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը սացվում է ըստ հաստատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ռ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ ոսկե-ծխնի կականք աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։

(օ. մ.) 755. 100—14

«ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպրի

Կրօնի դասագրքերը Վեհափառի Դիւանից

Թ ո յ լ ա տ ր ա ծ.

«ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ» Ե. տարի 50 կ.
«ՄԱՐԳԱՐԷՆԵՐ» Դ. տարի 40 կ.
«ԴԱՏԱՒՈՐ-ԹԱԳԱՒՈՐՆԵՐ» Գ. տարի 30 կ.
«ՆԱՀԱՊԵՏՆԵՐ» Բ. տարի 20 կ.
«ԱՌԱԿՆԵՐ և ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԻՑ» պատմուածներ Ա. տարի 10 կ.
«ՁԵՌՆԱՐԿ ԴԱՍՏՈՒԻ ՀԱՄԱՐ» Ա. տ. 30 կ.
20% զեղչով վաճառվում են Թիֆլիսի գրախանութներում։

(կ. հ.) 883. 5—2

ՄՕԴԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԵՒ

ԿԱՐՈՒՑԵԻ ու ԿՈՐՍԷՏԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Շտապով պատրաստում եմ վարժուհու և վարպետուհու կոչման համար, վկայագիր ստանալու իրաւունքով։ Սովորեցնում եմ զգեստեղէնի և կօրսէտների կարուձև ու ընդօրինակումներ, որ մեծ օգուտ կարող է բերել սովորողներին։ Ընդունում եմ գիշերօթիկ աշակերտներ։ Սալաեօրնայա փ. № 18։

853. 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ցերեկվայ ժամը 11½-ին, սեպտ. 7-ին 1914 թ., Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխական արտակարգ ընդհանուր ժողով։

Զբաղմունքի առարկաներն են՝

1) Դպրոցի վերաբերեալ մի շարք անյետաձգելի հարցեր։

2) Ընթացիկ հարցեր։

Քամոյեան ս. Գէորգ եկ.
Հոգաբարձութիւն
849. 1—1

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ արիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, բէցէպտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ անոյին դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԶՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գրքերը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Անիկարմասի շալվարը» ծիծաղաշարժ փօղեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միանոյն գաղտնիք», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 17 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ. կ.) 327. 100—30

Քաղաքից շտապ մեկնելու պատճառով

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Մ Ի Խ Ա Ն Ո Ւ Թ,

(մ ա ն ր ո ւ ք ի)

որի գնորդները բազմաթիւ են։ Անտոնովսկի փող. № 20։

848. 1—1

ԲԱՇՏԻ

հայոց դպրոցի համար ՀԻՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՍՈՒՑԻՉ և ՎԱՐԺՈՒՀԻ արդէն ՎԱՐՁՎԱԾ լինելով՝ մնացած խնդրատուներն այդ պաշտօնների համար ԱԶԱՏ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ։

853. 1—1

ՀՐԱՒԷՐ

Թեմիս Գերապատիւ Սրբազան Առաջնորդի կարգադրութեան համաձայն, Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխական ժողով այսօր, կիրակի, սեպտեմբերի 7-ին, պատարագից յետոյ, ժամը 11-ին՝ զբաղվելու հետևեալ հարցերով.

1. Հաշուետուների զեկուցումը նախկին հոգաբարձութեան և երէցփոխի հաշիւների մասին։

2. Հոգաբարձական նոր կազմի ընտրութիւնը։

3. Ուսումնարանի 1914/15 ուսումն. տարվայ նախահաշիւը։

4. Հաշուետուների ընտրութիւնը։

Ուստի խնդրում եմ յիշեալ եկեղեցու ձայնատու ծխականներին շնորհ բերել նշանակած ժամին ժողովին մասնակցելու։

Գործակալ Ա. մասի՝

Սարգիս ա.-ք. Շիօյեանց

850. 1—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1) Իմ պատասխանը բուրժուայէս ընկած եւ ամենից տխուր մարիվածին, 276 մեծադիր էջ. գինը . . . 50 կ.

2) Եւ դուք՝ Դպրոցի եւ ս. Եկեղեցու պաշտօնեան էք... 224 մեծադիր էջ. գինը . 50 կ.

Միայն 1-ին գիրքն ուղող զաւակատէր ծնողներն ու բարձր դասարանցիք պէտք է ուղարկեն միմիայն 25 կոպէկի, իսկ երկուսը միասին ցանկացողները 60 կ. նամականիշ։

Հասցէս՝ Тифлисъ, Орбеліановск. № 24. Левону Вардани Меликъ-Адамянцъ.

(կ.) 775. 5—4

Մամուլի տակ է

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

«ԻՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ»

Գ. տար., Գ. հրատ., բարեփոխված մեծ քանակութեամբ աւելի բարդ խնդիրներով և որոշ տեսակների վերածված խնդիրների առանձին խմբակցութիւններով։

Պահեստը «Գիր» գրախանութում է, ուր վաճառվում են այս դասագրքի նաև Ա.+Բ. և Դ. հատորները։

Ա.+Բ-ի գինը 30 կ., միւսներինը՝ 35-ական։

(30, 3, 7) 807. 4—4

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՑ
Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆ-ԴԱՇՏՈՅԵԱՆԻ

Աւանդվում են նաև շքեղ ձեռագործներ։ Կուրսը տեւում է 1—4 տարի, նայած աշակերտուհիների հասակին։ Ընդունվում են պատուէրներ կանանց և երեխայոց զգեստների և սպիտակեղէնի։ Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 10—2-ը և երեկ. 5—6-ը։ Հասցէն՝ Экзаршеская площадь, № 5.

814 10—9

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔԱՐԵԱՆ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունել. և լրացուց. քննութ. օգոստ. 26-ից։ Այբուբեն. բաժ. առանց քննութ.։ Պարապմունքները սեպտ. 1-ից. կուրսերում՝ սեպտ. 15-ից։

(կ ե.հ.) Միխայլովսկի պր. № 36. 779. 10—9

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. Ա Բ Ր Ա Հ Ա Մ Ե Ա Ն Ի

Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում աւանդվում են. պարտադիր—Հաշւապահութիւն կրկնակի իտալ., պարզ, գերմ., ֆրանս., ամերիկ. և ուրիշ սիստեմ. արդիւնաբերութեան գան. ճիւղերի, նաև գործար. և նաւթարդիւն., առևտր. թւաբ., առևտր. թղթակց., քաղաքատնտ., առևտր. իրաւունք., մուրհակի կանոնադր., առևտր. թւաբ. համրիչի վրա և վայելչագր. (ամենավատ ձեռքի ուղղումն.). ոչ պարտադիր—Օտար լեզուներ, սղագրութիւն և բեմինգտօն։

Նիւթերը մատեանների և գործնական պարապմունքների համար առնվում են բէալ կեանքից, ինչպէս որ պաշտօնում գտնված դէպքում։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Ատեստատներ տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։

Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (ե.հ.կ.) 749. 0—14

Ս.-Պետրօգրադի Պետական Կոնսերվատօրիայի Գեղարուեստական Խորհրդի

◆◆ Դ Ր Ո Ւ Ա Տ Մ Ա Ն Ա Ր Ժ Ա Ն Ա Ց Ա Ծ ◆◆

Հայ դպրոցների III և IV բաժանմունքների

ԵՐԳ-ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Առաջարկում ենք մեր

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

Ա. մաս՝ դիատոնիզմ. ◆ Գինը 35 կոպ.։ ◆ Տպագր. է Բ. մասը։

Դիմել բոլոր հայ գրավաճառներին։

(կ.հ.) 822. 8—3 ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

(Մխ. դպրոցների Դ. և մասամբ Գ. տարվայ դասընթացք)

ՔԱՐՏԷԶՆԵՐՈՎ

բազմաթիւ նկարներով և յաւելուածով։

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ։

Կազմեց Ներսիսեան դպրոցի աշխարհագրութեան դասատու Ե. ԸԼԻԲԸԿԵԱՆ։ Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներին, կամ հեղինակին՝ Ներսիսեան դպրոց։

841. 3—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2. Տէլէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։

Գործնական պրապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), տրագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դատ։ Ունկնդիրների թիւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ա. օ.) 720. 0—24

Թիֆլիսի Մանրաշխատ Առևտրական Դպրոց

Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է։ Այբուբենական բաժանմունքում ընդունվում են երեխաները առանց նախնական պատրաստութեան։ (ա.օ.) 836. 3 3

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ I-ԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ

Երկսեռ անձանց համար

(XV տարի)

Դասընթացքները գտնվում են Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ։

Դասընթացքներում աւանդվում են իտալական կրկնակի սիստեմով հաշւապահութիւն համապատասխան արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առևտր. թւաբանութիւն, առևտր. թղթակցութիւն, առևտր. իրաւունք, սղագրութիւն և ցանկացողներին սովորեցնում են գրող մեքենայի վրա։

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Դասընթացքները տևելու են 5 ամսից ոչ աւելի։ Դասընթացքներն աւարտողները ստանում են ատեստատներ։ Զբաղմունքները երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Վճարը 40 ռ. ամբողջ դասընթացքի համար։

Խնդրագրերը յանուն Թիֆլիսի Առևտրական Դպրոցի վերատեսչի ընդունվում են դպրոցի գրասենեակը առ. ժ. 9-ից մինչև ցեր. ժ. 2-ը։

(օ.մ.) 802. 10—7

Լոյս տեսաւ ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ և վաճառվում է

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ կազմած (ըստ Իվանովի, Կրուբերի և ուրիշ.)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Ա. ԳԻՐՔ, երրորդ և չորրորդ տարվայ դասընթաց (համաձայն հայոց դպրոցների ծրագրի) ԳՈՒՆԱՒՈՐ ՔԱՐՏԷԶՆԵՐՈՎ, բազմաթիւ պատկերներով, բացատրական քարտէզիկներով և աշխարհագրական յաւելուածով։ 1) Բնական մաս, 2) Կովկաս, 3) Ռուսաստան, 4) Փոքր Ասիա և Հայաստան, 5) Հինգ աշխարհամասեր, 6) Աշխարհագրական զրոյցներ։ Դասագրքի ներկայ տպագրութեան կցված են 1) Կովկասի, 2) Թիւրքահայաստանի, 3) Եւրոպ. Ռուսաստանի և 4) Կիսագնդերի բազմագոյն քարտէզներ (փոքրագրութիւն), որոնք միասին առանձին վաճառքի մէջ արժէն 40 կոպէկ։ Դասագիրքը, այդ քարտէզներով միասին, արժէ 60 կոպէկ։

Լոյս են տեսել և վաճառվում են նոյն դասագրքի նաև միւս մասերը.

Բ. ԳԻՐՔ, հինգերորդ տարվայ դասընթաց—Զորս աշխարհամասեր, բազմաթիւ պատկերներով։ Երկրորդ տպագրութիւն. Գինն է 65 կոպէկ։

Գ. ԳԻՐՔ, վեցերորդ տարվայ դասընթաց—Եւրոպա։ Քարտէզներով և բազմաթիւ պատկերներով։ Երկրորդ տպագրութիւն։ Գինն է 70 կոպէկ։

Դ. ԳԻՐՔ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (նոր լոյս տեսաւ), վեցերորդ տարվայ դասընթաց։ Բազմաթիւ պատկերներով, Կովկասի և Թիւրքահայաստանի գունաւոր քարտէզներով, այլ և Հին-Հայաստանի, Կիլիկիայի և այլ քարտէզներով։ Գինն է, քարտէզներով միասին, 80 կոպէկ։ Գումարով գնողներին 60 կոպէկ։

Դիմել Թիֆլիսի և գաւառական բոլոր գրախանութներին։ Պահեստը Թիֆլիսի «ԳԻՐ» գրախանութում։ Կազմողի հասցէն՝ Ներսիսեան դպրոց։ (գ. կ.) 831. 6—2

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ

Ինժեներ Գ. Զ. Եարալեան և Ընկ.

Թիֆլիս, Կվիրիլսկայա, 9, սեփ. տ.

Տնօրէնի տելէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ

Դիզըլ-շոգե-նաւթա-էլեկտր. կայարանների՝ առանձին աւտոմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերաբերմամբ ունենալիք հսկողութիւններից։ Ջրհան, սառցային, սառույց պատրաստող, փոշեմաքրիչ, ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթահան և այլիս պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ Կառուցում է—շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ Կատարում է—ամեն տեսակ կաթսային, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ Պատրաստում է—արտասահմանեան ֆիրմաների նորագոյն ձևերով շքեղ դարպասներ, ցանկապատներ, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մատնանշված աշխատանքների համար։

(կ.) 175. 25—25

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իսզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ.կ.) 551. 0—28

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный